

Ժողովուրդ- Հայոց, քեզ համար նկարեցի դը-
րախտի ընտանիքը • կաղաչեմ, որ իբրև հայելի
դնես աչքիդ հանդէպ, հայիս ու տնանա հի-

այլ զկատարումն այս ամենայն ասացելոցն և եթ
ի քս բարեխնամ ի մի յակնարկութիւն կարօտ
խոստովանեալ, մնամք անձկանօք :

Ի դիմաց թաղական խորհրդոյ ,
ատենադպիր , ատենապետ ,
Յարութիւն Եղապետան : Մ. Նի. Նազարեթեան :
Այնթապ , 5 Օգոստոս 1875 :

Մեծարու ատենապետի և ատենադպրի թա-
ղական խորհրդոյ Հայոց Այնթապ քաղաքի
քրիստոսանուէր ողջոյն :

Զպատուական գիր բարեպաշտութեան ձերոյ
տողեան ի 5 Օգոստոսի տարւոյս՝ ընթերցեալ
գոհութեամբ սրտի վեհափառ Հայրապետին ա-
մենայն Հայոց Տ. Տ. Դէմոքրատի Դի. բարեհաճե-
ցաւ, միջոցաւ գրութեանս, ծանուցանել սիրելի
եացի իւրոց Հայրապետական օրհնութեամբ
հանգերձ, թէ ոչ երբէք սիրելի ժողովուրդ-
մեր որ ի քաղաքիդ և ի վիճակիդ համարեալ
են օտար և ընդ կարծիս անգամ խորթութեան
այլ որպէս ամենայն ժողովուրդ ուղղափառ
Լուսաւորչական Հայոց, նոյնպէս և դուք ցայսօր
ուղղափառ հաւատով ձերով համարեալ էք հա-
րազատ որդի սրբոյ Մօրն լուսոյ կաթողիկէ
Էջմիածնի և ցլախանս ունիք անմոռոց մնալ
ի վեհափառ Դահակալէ սրբոյն Գրիգորի լուսա-
ւորչին մերոյ : Թէ և տարախնարիկ խորթութիւնն
և ստամբակութիւնն միմայն կայանայ յանձն
կաթողիկոս անուանելոյ կողմանդ :

Վեհափառ Հայրապետն հրամայեալ է տպա-
րանական ժողովոյ Մայր Աթոռոյն առաքել որ-
պէս բազում տեղեաց , նոյնպէս և վասն Այն-
թապի Հայոց դպրոցի մի մի օրինակ Վարդապետ
ամառեալ թիւի , որ 1868 թ. մինչև ցայսօր ա-
ռաքի ի Կ. Պօլիս առ ի հասնուցանել իւրաքան-
չիւրոցն ըստ հասցէին . ուստի կարող էք ի
պատրիարքան ժողովուրդ արժաւ տէր Յօհաննէս
քահանայէ և ի Մատթէոս վարդապետ իգմիր-
իկանէ պահանջել և ստանալ ամբողջ յամիս , և
զանցելոցն ստանալ ի խմբադրապետէ Մանու-
էի ի Պ. Գրիգորեանցէ :

Իսկ վասն առաքելոյ Ձեր այստ յորդեգրու-
թիւն ձեմարանի մայր Աթոռոյն զերկուս ուսա-
նողս՝ Նորին վեհափառութիւնն ըստ ամենայնի
բարեհաճ գտաւ և ի ձեռն մեր պատուիրէ սի-
րելութեան ձերում ի բանիլ առաջիկայ գոր-
նան առաքել զընտրեալ աշակերտացուս, միայն
ի իյնն նոքա ոչ աւելի քան զերեքտասան և
ոչ պակաս քան զմեծասան ամաց . միանգամայն
իյնն պարկեշտք , քաջառողջք և սիրողք ուս-
ման և ուղիւք , որպէսզի՝ հնար լիցի նոցա ի
փոյթ ժամանակի հաւատարիլ ուսմամբ գոնէ ա-
նուին դաստատան աշակերտաց ձեմարանին :

Զայսուհի ծանուցեալ ձեզ ի կողմանէ սրբադ-
նադոյն Հայրապետին , մնամք ձեր աղօթարար
Կաւաղանակիր վեհա. օծութեան ,

Պետրոս աթեղիակապոս վեհապետեան :
Ի Ս. Էջմիածին , 15 Դեկ. 1875 թ. :

Նիք , ճանաչէք ձեր չափն ու վիճակը . դուք շատ
աղքատ էք ուսում ու մտքով . ողբատ էք դաս-
տարականութեամբ և աղատութեամբ . աղքատ
էք գործունեայ աշխատասիրութեամբ . աղքատ
էք արուեստական հանճարով . աղքատ էք ի-
մաստուն անտեսագիտութեամբ : Առանց մոռա-
ւոր և նիւթական հարստութեան՝ դու միթէ
արժանի կը համարիս դքսն նոյն Եւրոպական ժո-
ղովրդոց ճոխ կեանքը վայելել : Ծանկի , այդ
կեանքը այդ . յառաջագիտութիւնը՝ ճակատի
անխնայ քրտնիքով բազմակերպ արեան զոհե-
թով , հարկբաւոր օտարներու մէջ հազիւ հազ
կազմուած է : Ե դու դեռ երեկ սկսեցիր նոր
երախտի զգեստ քնքարեալ կարգաւ . կը կարծես ու
կը հաւատաս թէ ուսեալ և քաղաքաւիթ իւր
լուսացի դարձար :

Ես կը գովեմ քո եռանդը , որ կը ձգտիս դէպ
ի յառաջագիտութիւն և քաղաքակրթութիւն .
միայն թէ սխալ ըմբռնած ես , որպէս թէ զեղ-
իւթ իւն , զեղծմունք , նորասիրութեան բուռն
տենչանք , ճշմարիտ քաղաքակրթութեան նը-
մանողութիւն է : Այդ նոյն իսկ քաղաքակրթ-
ութեան ժողովրդոց մէջ սխալքոր մասին կարծիքն է և
վարք : Դու ազնիւ եղիր ու ազնիւ ժողովրդոց
բարի ու պարկեշտ օրինակին հետևիր , որոց ա-
մենայն ինչ կը ուղ ու չափով է . որոց ընտանե-
կան կեանքին լոյս և պաշտօնադր ուսումն , դաս-
տարականութիւն և անտեսութիւնն է : Քաղա-
քակրթութեան ժողովուրդն այս երեք բառերով կը
վարէ իւր ընտանեկան կեանքը այս երեք բա-

— Այնթապէն հասեալ վերջին լուրքն կը ձանու-
ցանեն մեզ թէ՛ նոյն քաղաքին թաղական խոր-
հրդոյն կողմանէ՝ ըստ բարեգութ հրամանի վե-
հափառ կաթողիկոսին ամենայն Հայոց , Յակոբ
Պէքեարեան և Ներսէս Պօսիական ուղիւ՝ և պար
կեշտ պատանիներն՝ Մարտի 13ին՝ օրն յուղար-
կուեր են ի սուրբ Էջմիածին յորդեգրութիւն
նորահաստատ ձեմարանին մայր Ս. Աթոռոյն :

Նմանապէս ամենա. տէր Ներսէս Ս. Պատրի-
արք Հօր հրամանին համեմատ՝ Յակոբ Պէքեարեան
Կաթողիկոսն արթնալ պատանին յուղարկուեր է
ի Կ. Պօլիս յաշակիւրտութիւն Առաքել-Նուպար
Շահնազարեան գործոցին խառնակիւր՝ որ ի Պօլիս

Այնթապի Հայ հատարակութիւնն կրփափաքի
վասն այն ազգասիրական բարերարութեանց՝
իւր որդիական խորին երախտագիտութեան հա-
ւաստիքն՝ Արշալույս միջոցաւ , ամենախոնարհա-
բար մատուցանել վեհա. կաթողիկոսին ամենայն
Հայոց , որպէս և Նորին Օծութեան փոխանորդ
ամենա. սրբազան Պատրիարքին Կ. Պօլսոյ :

Ի ԴԻՈՒՆՈՑ

ՆԵՐՍԻՍԻ Ե. ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

(Ը բնա. գտանի հաւատարակչութիւն իւր
կարողութեամբ անուանելոյ յԱրքամար եւ
ի Սիս ընդ կարողութեամբ Էջմիածնի :)

Կաթողիկոսք Աղթամարայ և Սոյո ոչ բնաւ
համարեցան կամ համարին այժմ ըստ օրինաց
կաթողիկոսք . յաղաղս այլազգական բռնու-
թեանցն այնոցիկ հակառակածու նշանակեալ
օրինաւոր կաթողիկոսութեան ամենայն Հայոց
Գանգի յամի 1113 ի զօրանալ իշխանութեան
Ռուբինեանց ի Կիւրիկայ՝ ուր է Սիս քաղաքն՝
յորժամ առաջին կաթողիկոս անդէն ընտրու-
թեամբ Տեառն Բարդի վերջին կաթողիկոսի
Անուի և հաւանութեամբ բազմութեան եպիսկո-
պոսաց , վարդապետաց և իշխանաց Հայոց օծաւ
ի քսանամեայ հասակի Գրիգորիս Պահաւունի
յաղղէ սուրբ Լուսաւորչի գերազանցեալ իմաս-
տութեամբ և առաքինութեամբ առաւել քան
զբաղումն ի ծերոց , արքեպիսկոպոսն Աղթա-
մարայ Դաւիթ՝ նախանձեալ ընդ այն , հաւանե-
ցոյց զհազարացի մահմետական իշխողն Աղթա-

(1) Ռոման համարեցար ի Սոսկուս հրատարակեալ
ՓԱՐՈՍ պարբերականին անցեալ ամի չորրորդ տետ-
րակէն քաղէ այս յօդուածն , որ յոյժ օգտակար կարե-
լինէ ի միջոցիս յայսմիկ , յորում ծանր վիճաբանու-
քիւնք լինին ի Պօլիս ազգային ընդհանուր ժողովոյն
մէջ ի վերայ կարողութեամբ Սոյո եւ Աղթամարայ :

Ուրեմն , որով նոքա բարեբաստիկ և երջանիկ
կապրին աշխարհիս վերայ . վասնզի ուսման լու-
սով հաց կը դանեն , դաստիարակութեամբ հո-
գին և սիրտ կրթելով բարի ընտանիք կը կազմեն ,
իսկ անտեսութեամբ հացին սեղան և այլ կեան-
քի պիտոյքները չափով ու կշռով կը մատակա-
րարեն միշտ հոգաւոր ապագայի անստոյգ օրերն .
որ անշուշտ կը պատրաստեն մարդոյն համար
կամ երջանիկ բախտ կամ թշուառ կեանք . Բայց
մարդ իւր ներկային մէջ կամ զգաստութեամբ
կամ ապշութեամբ իւր ապագայ օրերն ինքնին
ձեռն քը կը պատրաստէ . զի ներկայն՝ ապագային
հիմն է և ապագայն ներկային յաջորդութիւն և
չէնք . Բովանդակենք մեր յորդորական ճառը .
ով դուք ընտանիք Հայոց , ուղղեցէք ձեր ներ-
կայն , որ ապագայն ուղիւ լինի . անտեսեցէք
ձեր ներկայն , որ ապագային հացը չպակսի Մի
մոռանաք վերջիշեալ երեք պայմանները որ
մեր թշուառ կեանքը կը բարւոքեն . և այս է՝
լուսով հաց գտէք , դաստիարակութեամբ բարի
ընտանիք կազմեցէք . իսկ իմաստուն անտեսու-
թեամբ հոգացէք միանգամայն ձեր ներկայն և
ապագայն :

Յաւարտ յորդորին ներողութիւն կը լինող բնա՝
քննարան ընթերցողներէն . ես միայն դրախտի
ընտանեաց գոնէն հարեանցի տեսութեամբ
անցի , թերի և անկեանք ստուերագիծն և եթ
հանելով . բազմահմուտ անտեսագէտ գրչաց կը
թողուի՝ ընտանեկան կեանքին ընդարձակ և
ճշգրտահան տիպն ըստ արժանւոյն ի լայնահեղ :

մարայ ի կամս իւր , և ձեռնառութեամբ նորոյ
ժողովեալ զհինգ եպիսկոպոսունս , հաճեցոյց և
զմիտս նոցա՝ յառաջ բերելով նոցա և ժողովրդոց
վիճակի իւրոյ պատճառս , թէ աստ յԱղթամար
նստեալ են յառաջագոյն կաթողիկոսք՝ որոյ
գերեզմանք ևս աստ են ահաւասիկ և թէ՛ դո՛ւս-
նին աստէն նաեւ ալ սրբոյ Լուսաւորչին , և նե-
ղան նորա , և քօղն , և գաւաղանն , և գօտին
մաշկեղէն , և այլ նշանք սրբոց . և թէ՛ աստ ի
վասպուրական էր յառաջագոյն աթոռ թա-
գաւորութեան Հայոց Արծրունեաց : Ըստ որոց
արժան է լինիլ և կաթողիկոս : Եւ այսպէս
ձեռնադրեալ ի նոյնոցն՝ նստաւ հակառակածու
անդէն յԱղթամար . ուր և տեէ այն յաջորդու-
թիւն նորա մինչև ցայսօր ընդ պաշտպանութե-
պնոցիկ Հազարացի իշխանաց՝ առանց ամենեկն
մասնակցութեանց ամենայն նախադրեալ արժա-
նաւորութեանց կաթողիկոսաց Էջմիածնի . նա
իսկ և անհաւասարապատիւ ամենայն արքեպիս-
կոպոսաց ձեռնադրելոց ի կաթողիկոսաց Էջ-
միածնի , ունեւոր ընդ իւր և գիւղերիկ վիճակ
ի միում մասին վասպուրականի ի շրջակայս
վանիցն Աղթամարայ :

Նման նմին և յետ բարձման թագաւորու-
թեան Ռուբինեանց ի Կիւրիկայ յամի 1375 ,
նեղեալ և անդանոր յայլազգական բռնութեանց
ամիրայից եգիպտոսի և այլոց մահմետականաց
կաթողիկոսք Հայոց , միաբանեցան բազմութիւնք
արեւելեան և արեւմտեան արքեպիսկոպոսաց , ե-
պիսկոպոսաց , վարդապետաց և իշխանաց Հայոց ,
վերադարձուցանել զկաթողիկոսութիւնն անդ-
րէն ի սեպհական աթոռ մեծ քահանայապետու-
թեան ամենայն Հայոց ի սուրբ կաթողիկէն
Էջմիածին , և հրաւիրեցին զտէր Գրիգոր Մու-
սաբէկեանց՝ որ էր յայնժամ կաթողիկոս ի
Կիւրիկայ թողուլ զՍիս և գալ Էջմիածին . այլ
նա ոչ յօժարեալ ընդ այն , եկած անդէն ի
Կիւրիկայ . յորժամ հաւանութեամբ և հաճու-
թեամբ ամենայն հոգեւորականաց և մարմնաւո-
րականաց ազգի Հայոց՝ յամի 1441 , ընտրեցին
կաթողիկոս ամենայն Հայոց զտէր Կիրակոս , և
օծեալ զնա Էջմիածին , զնա ընկալան առհա-
սարակ՝ որպէս բնակիչք մեծին Հայոց , այնպէս
և բնակեալքն ի մերձակայ սահմանս Կիւրիկայ ,
և յերուսաղէմ , յԱնատոլիայ , ի Կ. Պօլիս , ի
Պանտոս , ի Ղրիմ , ի Պարսս , ի Վիրս , և յայլ
տէրութիւնս՝ որք զաթոռն Էջմիածնի միայն
ճանաչէին հարազատ տեղի կաթողիկոսութեան
ամենայն Հայոց : Այլ Գրիգոր Մուսաբէկեանց
կացեալ անդէն ի Կիւրիկայ վախճանեցաւ յամի
1447 յորժամ կարապետ վարդապետ ոմն ի Սոյո
գիւմեալ առ ամիրայն Կիւրիկայ որ իշխէր ան-
դէն իշխանութեամբ Սուլթանին եգիպտոսի , և
խոստացեալ նմա վճարել ամ ըստ ամէ 300 դա-
հեկան , եւա ի նմանէ զիշխանութիւն կաթո-
ղիկոսութեան անդէն ի Սիս . որ և ընդ նովին
հարկատուութեամբ տեէ մինչև ցայսօր առանց
այլ ամենայն արժանաւորութեանց յատկացե-
լոց օրինաւոր կաթողիկոսութեան ամենայն
Հայոց աթոռակալի սրբոյ Լուսաւորչին սրբոյ
կաթողիկէ Էջմիածնի Արարատեան աթոռոյ ,
անուանեալ միայն կաթողիկոս Կիւրիկայ :

Երկրքին նոքա՝ կաթողիկոսն Աղթամարայ և
կաթողիկոսն Սոյո , ոչ երբէք համարձակին ան-
ուանել զինքեանս մեծ քահանայապետ , կամ
աթոռակալ և փոխանորդ սրբազան Առաքելոյն
Թագոսի և սրբոյն Գրիգորի Լուսաւորչի , կամ
գլուխ եկեղեցոյի , կամ Առաջնորդ հաւատոյ ,
կամ Հայրապետ , եպիսկոպոսապետ , Հօտապետ ,
հովուապետ , և ծայրագոյն Պատրիարք ամե-
նայն ազգի Հայոց . այլ միայն զանունն կաթո-
ղիկոսական կրեն մասնաւորաբար , առաջինն ա-
նուանեալ կաթողիկոս Աղթամարայ և երկրորդն
կաթողիկոս տանն Կիւրիկայ . երկրքին նոքա
օրհներն զՄիւռոն , և ձեռնադրեն զեպիսկոպոս .
այլ ոչ ուրեք արտաքոյ վիճակի նոցին ընկալեալ
լինին ի տեղեգրատարած վիճակի ընդհանրական
կաթողիկոսութեան Էջմիածնի մինչև ցայսօր
ոչ Միւռոնն , ոչ եպիսկոպոսունքն , և ոչ քս-
հանայք ձեռնադրեալք . յեպիսկոպոսաց նոցին .
այլ հազիւ ուրեմն յանկիւնս ուրեք ի միջի կոեհ-
կաց ի ժամանակի անանցանելի հարկաւորու-

Թեանց բազում խտրութեամբ : Չեն նոքա երկրքին առաւելագոյն քան վարքեպետականութեան ձեռնարկեցեալս 'ի կաթողիկէ Արարատեան Աթոռոյ . և ոչ բնաւ զօրեն մերձեցալ ինքնակամ 'ի տնօրէնութիւնս ծանր կամ թեթեւ իրողութեանց վերաբերելոց առ եկեղեցի Հայոց առանց նախադատութեանց և ընտրութեանց և վճռոյ կաթողիկոսին էլ միաձնի , որ միայն ճանաչի , որպէս յամենայն ազգէ Հայոց 'նոյնպէս և 'ի նոցունց Գլուխ սրբոյ եկեղեցւոյ Հայոց և հրամանատար ամենայն հոգեւորականաց 'նորին :

Եւ ըստ այսմ երբէք չէ բաժանեալ ազգն Հայոց , յերիս պատրիարկական նահանգս ըստ օրինաց քրիստոնէութեան իւրեանց . և վիճակաւորքն երկուքին 'յԱղթամար կամ 'ի Սիս' ոչ երբէք չեն կրեալ մինչև ցայսօր զանուն պատրիարկութեան , այլ միայն զանուն կաթողիկոս և այն արտաքոյ ազգական օրինաց բռնակալութեամբ հեթանոս իշխանաց , յաղագս արժանաւորութեանց իրիք իշխանութեան իւրեանց 'այնմ կողմանց 'նոյն կամ չահեկանութեանց 'ի նոցունց , և չեն ունեցեալ իւրիք զհասարակութիւն բնդ Պատրիարքին Արարատեան աթոռոյ էլ միաձնի : Այլ հազիւ ուրեմն ըստ այլ անձնական արժանաւորութեանց իրիք իւրեանց 'սմանք 'ի նոցունց զօրեն հաւասարել երբեմն բնդ 'նախապատիւ արքեպիսկոպոսոց ձեռնարկելոց 'ի նշմանէ , և աւելի ևս կաթողիկոսն Աղթամարոյ որ յոյժ անշուք և անյարգ քան զկաթողիկոսն Սիս 'է որպէս արքեպիսկոպոս առաւել 'նախապատգոյն վիճակաւոր :

Ուրախ սրտիւ կիմանամք թէ վսեմա Նուպար փաշան նշաներ է գնախաժին դուռտր իւր 'նոյնէ մի օրիորդն ընդ մեծաշուք Լեւոն—Պէյ ծաղկահասակ երիտասարդին , որ որդին է Գարամահեան մեծարդոյ Մանուկ աղային , աներձագին հանգուցեալ Տատեան Պողոս—Պէյին :

Աւելորդ կըհամարիմք նկարագրել աստ յիշեալ հարմանցու շնորհագեղ օրիորդին կատարեալ դաստիարակութիւնն և 'նորա սրտին վեհ զգացմունքը . իսկ երիտասարդ փեսացուն որ իւր դաստիարակութիւնն յԱնգղիա ընդունած է , բաց 'ի հայերէն գրագիտութենէ և յանգղիարէնէ զոր կըխօսի իբրեւ զմայրենի լեզուն իւր , քաջ գիտէ մի քանի ևրոպական լեզուս :

Կըլսեմք թէ ամուսնութեան սուրբ պսակի աւարտողութիւնն առաջակայ Յունիս ամսոյն մէջ պիտի կատարուի :

—ՓՈԽՆՁ Լրագիրն կըսէ ' թէ ' Զատիկի առաջին օրը Պէյօղլուի (Պոլիս) յունական եկեղեցւոյ պատուարժան կղերն եկեղեցական չքել թափօրով մեր եկեղեցին գալով սղջունեցին և շնորհաւորեցին մեր կղերն , և եկեղեցւոյն մէջ երկու կողմանէ սիրոյ ու միութեան համար բարեմաղթութիւններ եղան , որոյ վրայ հաղորաւոր յոյն և հայ ժողովուրդ , որք բազմաթուոն թափած էին , ուրախ եղան և գոհունակութեան յոյցեր ըրին : Յունական թափօրն մեր եկեղեցին եկած ու մեկնած ատենը , մեր կղերն ալ եկեղեցական հանգիսիս գիմաւորեցին :

—Կ. Պօլսոյ ՆԵՕԼՈՂՈՍ անուն յունարէն լրագրոյն մէջ հետեւեալ կրնի թելադրուի .

«Յերէկն (9 Ապրիլ) Պէյօղլուի Հայոց եկեղեցւոյն կղերն առաջնորդութեամբ Մեծաւոր վարդապետին իւրեանց , առաւօտեան ժամը 10ին (ըստ Յրանկաց) Պէյօղլուի Ընծայումն սուրբ Աստուածածնի անուանեալ մեր եկեղեցին եկան , երկրորդ պատարագին ժամանակը 'ի փոխարէն եղբայրական այցելութեան 'զոր ըրին 'նոցա մերայինք յաւուրն Ս. Զատիկի : Յիշեալ եկեղեցւոյն Ս. Առաջնորդն 'այսինքն Եամպօլուի եպիսկոպոսն ընդունեցաւ առաջի դրան Ս. Սեղանոյն զմեծաւոր վարդապետն Հայոց , որ թուրքերէն համառօտ ատենախօսութիւն մի բրաւ 'ի ներկայութեան հաւատացելոց 'ի տաճարին ժողովելոց , որոց եղբայրական զգացմունքն ոչ սակաւ կըզօրանային տեսանելով զկղերն եղբայրակից ազգաց 'մեկնոյն զգացմամբ ոգեւորեալ :

—Կըլսեմք 'ի հաւատարիմ աղբիւրէ թէ Գալանեան արժաւոր Նիկիէ վարդապետն , որ յամուրջ հետէ 'ի քաղաք մեր գտանի , հրաւիր-

ուեր է յաղդային Պատրիարքարանէ Կ. Պօլսոյ 'որ յԱտանա երթայ , յիշեալ վիճակի ժողովուրդը հովուելու և հոգեւորապէս միխթարելու համար :

ՔԱՆԱՔԱՆ ԽԱՒԻՔ

Զմիռնիա , 17 Ապրիլ :

Հինգշաբթի գիշեր 'որ ուրբաթ պիտի լուսնայր , սաստիկ անձրեւ եկաւ հանդերձ ահագին որոտմունքով . Այս ամենաօգտակար անձրեւն , որ երէկ ևս շարունակեցաւ թեթեւ կերպիւ , մեծ ուրախութեան պատճառ եղև երկրագործաց , քանզի անձրեւի կարօտութիւն ունէր երկիրը :

—Կ. Պօլսէն կըգրեն թէ վսեմ Սայիտ էֆէնտին 'բարձրա Մեծ—Եպարգոսին խորհրդական (միւլթէշար) կարգուեր է , և թէ վարձակալ ընկերութիւն օսմանեան տէրութեան 'անուամբ մեծ ընկերութիւն մի կազմուեր է , որոյ պաշտօնն պիտի լինի հաւաքել հասարակաց պարտուց տոկոսեաց ապագայ վճարման յատկացեալ եկամուտներն , զորս պիտի հատուցանէ զինի միաւորելոյ և 'ի մի ձև վերածելոյ տէրութեան բոլոր փոխառութիւնքն և շարժական պարտքն :

—Մեր վսեմ վալին 'գաւառաց վարչական ժողովոց և գատական ատենից անդամոց ընտրութեան մասին բարձրա Դունէն ընդունած հրահանգին մէկ օրինակը 'անցեալ շաբթու , յուլիսեց քաղաքիս Հայոց , Յունաց և Հրէից հոգեւոր հովուացը , որպէսզի 'ըստ պայմանաց 'նոյն հրահանգին 'իւրաքանչիւր 200 սունկ երկու ընտրող պատրաստէ , Եւ որովհետեւ Զմիռնոյ Հայոց աներն 900ի չեն հասնիր , ուստի 800 տանց վերայ հաշիւ ըլլալով , կըլսեմք թէ արդէն 8 ընտրողք (ինթիխապճի) որոշուեր են :

Աստիք միանալով քաղաքիս Մահմետական ժողովրդեան , Յունաց և Հրէից հասարակութեանց կողմանէ որոշեալ ընտրողաց հետ , պիտի ընտրեն 'միաբանութեամբ մեր գաւառին միւս քաղաքացի կողմանէ եկեալ ընտրողաց , վիւլայէթին վարչական ժողովոյն և գատական ատենին անդամները :

Ահաւասիկ ըստ հրահանգին Բ. Դրան , ընտրող լինելու պայմանքն .

Ընտրող (ինթիխապճի) ընտրելու իրաւունք ունին ամեն աստիճանի անհատք 'որ գոնէ 20 տարեկան են և տուրք կըվճարեն :

Իսկ վարչական ժողովոց և գատական ատենից ընտրողքն (ինթիխապճի) առ նուազն 25 տարեկան պիտի լինին , ոճրագործութեամբ գատապարտեալ կամ մէկու դէմ հարստահարութեամբ վարուած անձինք պիտի չլինին , օսմանեան հպատակ և տուրք վճարող պիտի լինին ու անձնական արժանիք պիտի ունենան :

—Մեր վիւլայէթին համարակալ (տէֆթէրտար) վսեմ Շաքիր—Պէյն , որ մեծ ծառայութիւններ մատուցած է և կըմատուցանէ միշտ կայսերական կառավարութեան , առաջին կարգին առաջին աստիճանի պաշտօնատար անուանեցաւ :

—Մեծա. մօսիւ էլի Տիւսօ , որ քաղաքիս քարափունքը (քէ) շինող Տիւսօ Յրէր մեծահարուստ գաղղիացի ընկերութեան գլուխն է , նմանապէս մօսիւ էլէպզար Տիւսօ—Պէյ և իւր տիկինն անցեալ շաբթու գաղղիական շոգենաւով մեկնեցան 'ի Մարսիլիա երթալու :

Արժան կըհամարիմք ծանուցանել թէ մօսիւ էլիպզար Տիւսօյին Պէյութեան տիտղոսն 'յանցելումն Եգիպտոսի փոխարքայէն շնորհեցաւ նմա :

—Պարսից օգոս. Շահն բարեհաճեցաւ Արեգական և Արիւծու կարգին շքանշանաւ պատուել զմեծաշուք Տիւսօն էֆէնտին , որ մեր վիւլայէթին արտաքին գործոց թղթակցութեան տնօրէնն է , և իւր պաշտօնին գործադրութեան մէջ օգտակար ծառայութիւններ մատուցած է Պարսից կառավարութեանը :

Միւսնոյն շքանշանաւ պատուեցաւ նաև մեծա. Բեմալի էֆէնտին , որ քաղաքիս առևտրական ատենին նախագահն է :

Այլև մեր վիւլայէթին արտաքին գործոց թղթակցութեան գրասենեկին խորհրդոյ քարտուղար մեծարդոյ Յիւրի էֆէնտինն յիշեալ կարգին երկրորդ աստիճանի շքանշանը շնորհեցաւ :

—Զմիռնոյ Պարսից ընդհանուր հիւպատոս

մեծաշուք Մէհմէտ—Պէյն , որ գաղղիական բանիբուն պաշտօնատար մըն է , միանգամայն Տարտանէի հիւպատոս անուանեցաւ բարձրագոյն հրամանաւ :

—Վիւթոր—Էմմանուէլ վեհա. թագաւորին հրամանագրով , մեծա. տեսարք Բիէր Ալիօթի և Բիէր Վէրնացցա , որ իտալացի պատուաւոր վա. ճառականք են 'ի քաղաքիս , իտալիոյ Գիւրոն կարգին ասպետ անուանեցան :

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Բամպակէն այս շաբթու 2000 հակի չափ վա. ճառեցաւ 335 զուրուշէն մինչև 280ի կենդինարը ըստ տեսակին :

Աֆիօնին գլխերն մեր վերջին թիւէն 'ի վերաւականապէս իշան և անցեալ շաբթու 100 կողովի չափ հասարակ աֆիօն վաճառեցաւ 130 զուրուշի առ չէքին . իսկ Գառահիսարի աֆիօն հազիւ թէ 135 զուրուշի կրնայ գնոյ 'առնուիլ : Փալամուտի Անգղիոյ տեսակէն 3000 կենդինարի չափ վաճառեցաւ 97 զուրուշի կենդինարն Ոչխարի բուրգն , ճէհրին և քէօքպոյսն 'ի մեծի հանգարտութեան գտանին և սրեւէ վաճառու 'չեղաւ :

ԾԱՆՈՒՅՈՒՄ

ՄԼՆԿՏԻՐ

ՀԵՂԻՆԱԿ ԵԱՆՓԼԷՕՐԻ

Ուրեմա 236 երեսներէ բաղկացեալ ընտիր ու զոդորիկ երկասիրութիւն մըն է մանկաց դաստիարակութեան վրայ : Հեղինակը կընկարագրէ մանկաց այլեւայլ հատկի պահանջումները , խաղերը , հոգեբանական հանգամանքն , որոցմէ խիստ ուշիմ դասեր , նորք դիտողութիւններ կըհանէ , համառօտ եւ պարզ 'այլ իմաստալից ոճով , եւ կըհրաւիրէ ծնողը որ ին ճամբան բողոքն ու աւելի բանասոր եւ օգտաւետ ընթացք մը բռնեն իրենց մանկաց կրթութեան համար : Այսպիսի գործեր որչափ շատնան ազգին մէջ այնքան օգուտ կրնան բերել , եւ քարգմանքն մեծա. Մ. Մամուրեան , որ 'ի յիշատակ իր վաղամեռիկ որդեկին նուիրած է գայն , աւելի սիրուն գործ մը չէր կրնար ընտրել ճշ միայն իր հայրական գործը յայտնելու , այլեւ գործնական հրահանգ մը տալու համար : Յուսակի է սր մեծա. քարգմանքը այսպիսի գործերու ստանալիք ընթուրելութեան վրայ քաջաւորաբ 'աւելի ընդարձակ կրթական երկեր 'ի յոյս հանելու : Այս 'նախաշարի մըն է ըստ մեզ , հրապարակի , Հայ ընթերցողին ուշադրութիւնը յրազողմ գրուածոց դարձնելու համար : Այսպիսի գիրք մը ամեն ծնողաց հետքը մէյմէկ օրինակ գտնուել պիտի :

Զմիռնիա , տպագրութիւն Տէտեան , 1876 :
Գինն է 2 ծրանք :

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Այս լրագիրը երկու շաբթու անգամ մը 'շաբթ օրը կըհրատարակուի : Տարեկան գինը 120 զուրուշ է ող զրամով , կանխիկ վճարելի : Դուրս երթալու լրագրաց ճանապարհի ծախքը 'առնողին վերայ է : ՌՎ որ կուէ 'կրնայ բաժանորդ գրուիլ Զմիռնիա ' Ս. Շառլոտայի գրատունը . իսկ ուրիշ քաղաքաց համար , ահա կընշանակեմք լրարոյս մեծարդոյ գործակալաց անուանքը , որք են .

- Կոստանդնուպօլիս ' Հ. Ս. Ալաճահեան էֆէնտի , Տիւրքի և Տիւրքի լրագրոյն :
- Ալէքսանդրիա ' աղա Մկրտիչ Հալէպեան :
- Գահ'ի ' Իսկէնտէր աղա Մելիքեան :
- Գոպպ ' աղա Սիմօն Ս. Մուրատեան :
- Բէդէրսպօլի ' Խաչատուր սարկաւազ Խանթարեան :
- Մոսկու ' պարոն Զարմայր Մսերեան :
- Հալպ ' Տ. Խաչակ Իսահանյ Շահվէրդեան .
- Պաղատ ' Անգղիոյ հիւպատոսի փոխանորդ , աղա Միքայէլ մահմուտի Միսանեան :
- Կալկաթ ' պարոն Մ. Խ. Յովակիմեան :
- Մատրա ' պարոն Անդրէաս Սամ :
- Պաղադի ' պարոն Մանուկ Որդանանեան :

Խմբագիր—տէր լրագրոյս ,
Պ. — Գ. Պալէ—Շալէ :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱՆՈՒՍՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ